ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 31 » հոկտեմբեր 2025թ. No 6676 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 120.15-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/5187 առ 23.10.2025թ. գրությունը և ռեֆերենտ երկրների փորձագիտական եզրակացությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը լիազոր մարմնի նախաձեռնությամբ փոխադարձ ճանաչելու (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 120.15-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հոկտեմբերի «31 » - ի N6676 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը լիազոր մարմնի նախաձեռնությամբ փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Կանսալազին	մեսալազին	դեղահատեր երկարատև ձերբազատմամբ	500մգ; (50/5x10/) բլիստերում, (100/10x10/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում	Կանոնֆարմա պրոդակշն ՓԲԸ, շ. 105 Բ, 11, Զարեչնայա փ., Սչելկովո քաղաք, ուրբան դիստրիկտ Սչելկովո, Մոսկվայի շրջան- բաց թողնման հսկող, Կանոնֆարմա պրոդակշն ՓԲԸ, շ. 105 Բ, 16, Զարեչնայա փ., Սչելկովո քաղաք, ուրբան դիստրիկտ Սչելկովո, Մոսկվայի շրջան, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող	Ռուսաստան	Կրոնոֆարմ ՍՊԸ, Պեչատնիկի մունիցիպալ դիստրիքթ, 1-ին Կուրյանովսկայա փողոց, 34, շինություն 1, Մոսկվա 109235	Ռուսաստան	Դ	23516 (021815) 23.10.2025
2	Կանսալազին	մեսալազին	դեղահատեր երկարատև ձերբազատմամբ	500մգ; (50/5x10/) բլիստերում, (100/10x10/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում	ՖարմՎԻԼԱՐ ՍՊԸ ՍՊԱ, Կոմունիստսթրիթ շ.115, Մալոյարոսլավետս, Կալուգա մարզ, Մալոյարոսլավետսկի շրջան 249096	Ռուսաստան	Կրոնոֆարմ ՍՊԸ, Պեչատնիկի մունիցիպալ դիստրիքթ, 1-ին Կուրյանովսկայա փողոց, 34, շինություն 1, Մոսկվա 109235	Ռուսաստան	Դ	23517 (021815) 23.10.2025